

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ  
ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ Թ. ԿԱՄՊԱՆԵԼԼԱՍՅԻ  
«ԱՐԵՎԻ ՔԱՂԱՔ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Լ.

XVI-XVII դդ. իտալացի նշանավոր մտածող, ուտոպիստական-սոցիալիստական ուսմունքի ամենավաղ ներկայացուցիչներից մեկի՝ Թոմազո Կամպանելլայի «Արևի քաղաք» ստեղծագործության ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտելու մի շարք կարևոր խնդիրներ, որոնք վերաբերում են պետության ծագմանը և էությանը, պետության ձևերին, պետական-իրավական հարցերին: Այն ոչ միայն ուշագրավ է հարցի պատմաբանության ուսումնասիրության և իմացության տեսակետից, այլև առիթ՝ անդրադառնալու պետության և իրավունքի չափազանց կարևոր հարցերի մի համակարգի, որն այսօր էլ՝ XXI դարի սկզբին, կարող է օգտակար լինել<sup>1</sup>:

Պետության և իրավունքի մասին ուտոպիստ-սոցիալիստների ուսմունքը հիմնականում առանձնացնում է հարցերի երեք խումբ. շահագործող դասակարգի քննադատությունը և իրավունքը, պետության և իրավունքի հարցերը ապագայի հասարակության մեջ, պետության և իրավունքի դերը անցումային ժամանակաշրջանում՝ հին հասարակարգից նորին անցնելիս<sup>2</sup>:

Թ. Կամպանելլայի լավագույն պետության մասին պատկերացումները արտացոլվել են «Արևի քաղաք» ստեղծագործության մեջ, որտեղ նա որոշակի պայմանների և չափորոշիչների համադրումով փորձում է ներկայացնել արդարացի և բանական պետության իր տարբերակը, անդրադառնում պետական կառուցվածքին, կառավարման ձևերին և քաղաքական ռեժիմին վերաբերող հիմնահարցերին:

Հանրահայտ է, որ պետականագիտությունը մինչև օրս արձանագրել է պետության կառավարման երկու հիմնական ձև՝ միապետություն և հանրապետություն՝ դրանցից յուրաքանչյուրին բնորոշ տարատեսակներով<sup>3</sup>: Այսպես, օրինակ, միապետությունը դրսևորվել է սահմանափակ և բացարձակ ձևերով՝ բռնակալության, բռնապետության և բռնատիրության երանգներով, իսկ հանրապետությունը՝ արիստոկրատական, օլիգարխիական և դեմոկրատական տարբերակներով: Նոր ժամանակներում քաղաքական համակարգերին բնորոշ են

<sup>1</sup> Թ. Կամպանելլայի «Արևի քաղաք» ստեղծագործությունից մեջբերված բոլոր օրինակները վերցված են հետևյալ հրատարակությունից՝ Կամպանելլա Թ., Արևի քաղաք, Ե., 1969:

<sup>2</sup> Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Անտոլոգիա միջազգային փիլոսոֆիայի, տ. 2, Մ., 1970, շ. 180-192; Դե Սանտիս. *История итальянской литературы*, М., 1964, շ. 320, 340; Բյուենոս Ա. Ի. Կամպանելլա, *Л.*, 1956, շ. 3-24; Բոգոյան Լ. Մ. *Парадокс Кампанеллы (Вопросы философии)*, 1971, N 2):

<sup>3</sup> Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Հովսեփյան Գ. Ե., Թ. Կամպանելլայի պետական-իրավական հայացքները, Ե., 2000, էջ 11-23:

սահմանադրական միապետությունը, խորհրդարանական և նախագահական հանրապետությունները: Դրա հետ նաև քաղաքացիական հասարակության կառուցման, պետությունների ժողովրդավարացման և իրավականացման գործընթացում աստիճանաբար նկատվում է պետական կառավարման տարբեր ձևերի նախընտրելի հատկանիշների հնարավորինս համատեղման անհրաժեշտություն, որն իրացվում է կառավարման խառը ձևի պայմաններում:

Մեծ մտածողը իր պետության՝ «Արևի քաղաքի» համար ենթադրում էր նաև նոր տիպի պետական կառուցվածք, կառավարման մարմիններ, պաշտոնական անձանց, ովքեր ժողովրդի լայն մասնակցությամբ պետք է իրականացնեին տնտեսական-կազմակերպական և մշակութային-դաստիարակչական գործունեություն:

Հենվելով անտիկ հեղինակների, իր ժամանակակից փիլիսոփաների, մտածողների և եկեղեցու նշանավոր հայրերի ուսմունքների վրա՝ Կամպանելլան իր ստեղծագործության մեջ ցույց տվեց, թե ինչ կարևոր գործոններ են պետք ուտոպիական պետության ծագման և ձևավորման համար՝ հասարակական-քաղաքական որոշակի համակարգ, գույքային և հասարակական հավասարություն, համայնական աշխատանք, հասարակության միասնականություն, ամբողջականություն և այլն:

Կամպանելլան միաժամանակ ներկայացրեց պետության կառավարման տարբեր ձևեր և հատկապես ցույց տվեց, որ իր «Արևի քաղաքը» կառավարվում է հիմնականում խառը սկզբունքով՝ միապետական, օլիգարխիական և ժողովրդական: Կամպանելլայի պետության մեջ երկրի ղեկավարությունը բաշխված էր ըստ պաշտոնների և ըստ պարտականությունների: Այստեղից էլ բխում էր նրա պե-տական կառուցվածքի ինքնատիպ ձևը՝ Արև կամ Մետաֆիզիկ (Գլխավոր կառավարիչ), Արև և նրա երեք տեղակալները (Գլխավոր կառավարիչ և Ջորություն, Բնաստություն և Մեր), Մեծ խորհուրդ (20 տարին լրացած բոլոր քաղաքացիները), Փոքր խորհուրդ (Արևը, տեղակալները, նրանց տեղակալները, օգնականները և այլն):

Պետության խառը կառավարման ձևը, կարծում ենք, մեր ժամանակներում էլ կիրառվում է, քանի որ առանձին բաղադրամասերի համակցումներ ժամանակակից պետությունների կառավարման համակարգում էլ կարելի է տեսնել՝ միապետական-հանրապետական, կիսանախագահական-խորհրդարանական:

Մասնագետներից ոմանք «Արևի պետությունը» համարում են հանրապետություն, մյուսները՝ ճշմարիտ միապետություն, երրորդները՝ քչերի (օլիգարխիների) կառավարում, չորրորդները՝ Աստվածապետություն և այլն<sup>4</sup>: Եվ չնայած նրանցից յուրաքանչյուրը փորձում է «Արևի քաղաքից» քաղված այս կամ

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Պեդրո Ա. Զ. «Город солнца»: утопия и наука, М., 1978, с. 214-215.

այն ակնարկը, արտահայտությունը օգտագործել իր դիրքորոշումը հիմնավորելու համար, փաստը մնում է փաստ, որ Կամպանելլան, բնական իրավունքի դիրքերից մերժելով ֆեոդալական համակարգը, մերժում էր նաև այդ համակարգը գլխավորող, ֆեոդալական պետական իշխանությունը մարմնավորող միապետին: Նույն բնական իրավունքով մերժելով մարդկանց միջև հասարակական-տնտեսական ու քաղաքական անհավասարության որևէ դրսևորում, ծագումնաբանական, դասային առանձնաշնորհում՝ անընդունելի էր համարում արիստոկրատական և օլիգարխիական կառավարման ձևերը: Նա հակված էր լուսավորյալ ու բանիմաց կառավարչի ղեկավարությամբ, հասարակության գաղափարական ու ոգեղեն ներուժի ներգրավումով ապահովել ժողովրդավարական այնպիսի համակարգ, որն այսօրվա չափանիշներով կհամատեղեր նախագահական և խորհրդարանական հանրապետությունների առավելությունները:

Կամպանելլայի «Արևի քաղաքի» բարձրագույն կառավարիչը (լատիներեն *princeps magnus*) կոչվում է «Արև»: «Մեր լեզվով,- գրում է Շտեկլին,- «Մետաֆիզիկ»:  
Նա բոլորի վերադասն է (գլխավորը), բոլոր հարցերի վերաբերյալ՝ աշխարհիկ, և՛ հոգևոր, նա վերջնական որոշում է կայացնում: Նրա երեք տեղակալները՝ Պոն, Մին և Մորը (Զորությունը, Իմաստությունը և Սերը), ունեն իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակը և վերահսկում են հասարակական կյանքի որոշակի բնագավառ կամ ոլորտ»<sup>5</sup>:

Հասկանալու համար, թե վերջապես պետության ինչ ձևեր է առաջարկում Կամպանելլան, հետազոտողներն առաջարկում են ծանոթանալ Արևի քաղաքի պետական մարմինների կառուցվածքին, նրա բաղադրամասերի կազմակերպմանն ու գործունեության սկզբունքներին: Նա տալիս է պետական մարմինների հետևյալ դասակարգումը.

1. Մեծ խորհուրդ.
2. Պաշտոնական անձանց խորհուրդ.
3. Գլխավոր կառավարչի՝ Արևի և նրա երեք տեղակալների խորհուրդ.
4. Գլխավոր կառավարիչ (Արեգակ կամ Մետաֆիզիկ):

Արևի քաղաքում ամիսը երկու անգամ՝ նորալուսնի և լիալուսնի ժամանակ, տեղի է ունենում Մեծ խորհրդի նիստ: Այն 20 տարին լրացած տղամարդկանց և կանանց ժողովրդական հավաք է: Յուրաքանչյուրին հարցնում են, թե պաշտոնական անձերից որն է լավ և որը վատ:

Այսպիսի խորհրդի ստեղծման և ամիսը երկու անգամ գումարելու նպատակն է հնարավորություն ընձեռել ժողովրդին իր կարծիքը հայտնելու պաշտոնյաների մասին՝ հանել կամ նշանակել նրանց: Միաժամանակ հարկ է նշել, որ այսպիսի որոշումները չեն վերաբերում վերադաս չորս պաշտոնյաներին՝ Արեգակին և նրա երեք տեղակալներին:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 220-221:

Ինչպես երևում է տեքստից, Մեծ խորհուրդը կամ Ժողովրդական խորհուրդը Արևի քաղաքացիների հպարտությունն է: Արտակարգ նիստերը գումարվում էին ըստ անհրաժեշտության՝ պետության համար խիստ կենսական և անհետաձգելի խնդիրներ քննարկելու նպատակով: Օրինակ՝ երկրի համար բախտորոշ նշանակություն ունեցող և վերջնական լուծում պահանջող դեպքերի ժամանակ, ինչպիսին պատերազմի կամ խաղաղության հարցն է: «Հենց որ ժողովուրդը ենթարկվում է բռնության, վիրավորանքի, ավազակության, կամ թե ճնշվում են նրանց դաշնակիցները, կամ նրանց օգնության են կանչում ուրիշ քաղաքներ, որոնք բռնության կամ ճնշման տակ են,- գրում է Կամպանելլան,- նրանք անհապաղ խորհրդի են հավաքվում: Նրանք առաջին հերթին աղոթում են Աստծուն՝ իրենց լավագույն վճիռ ներշնչելու համար, իսկ այնուհետև քննարկվում են գործի հանգամանքները, որից հետո հայտարարվում է պատերազմ»<sup>6</sup>:

Ուշադրության են արժանի հատկապես Կամպանելլայի իրավական հայացքները: Նրա հարցադրումները, մեկնաբանությունները, բացատրություններն ու գործնական օրինակները, որոնք կիրառվում են «Արևի քաղաքում», վերաբերում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են բնակիչների կամ քաղաքացիների ամուսնական և ընտանեկան իրավունքը, աշխատանքային իրավունքը, քաղաքացիության իրավունքը, հանրային սեփականության իրավունքը, միջազգային կապերն ու պայմանագրերը (թեթևակի), դատարանը և դատավարությունը, օրենքները, հանցագործությունների տեսակները, պատժի տեսակները և այլն: Դրանք կիրառվում էին ուտոպիստական պետության մեջ:

Կամպանելլան իր որոշակի պատկերացումներն ունի իրավունքի մասին, որը նրա պատկերացմամբ դրսևորվում է «արդարության» մասին գաղափարներում: Արդարությունը, նրա կարծիքով, առաջին հերթին դրսևորվում է բարոյական սկզբունքների մեջ: Ըստ Կամպանելլայի՝ շահագործողական հասարակության իրավունքը արտահայտում է միայն շահագործողների իրավունքները, ծառայում է միայն շահագործմանը և առանձին մարդկանց հարստություն կուտակելուն: Մինչդեռ «արդարության» սկզբունքների վրա հիմնված իրավունքը պետք է համապատասխանի աշխատավորության հետաքրքրություններին, ապահովի նրանց իրավական հավասարությունն ու ազատությունը, նյութական բարեկեցությունը:

Միաժամանակ ուտոպիստները, նաև Կամպանելլան, պահանջում էին օրենսդրության պարզեցում և իրենց ստեղծագործություններում («Արևի քաղաք», «Ուտոպիա») ցույց էին տալիս, թե ինչպես պետք է աշխատավորները մասնակցեն երկրի օրենսդրական գործունեությանը:

<sup>6</sup> Կամպանելլա Թ., նշվ. աշխ., էջ 101:

Կարծում ենք, արդիական է հնչում նաև նրա կարծիքը հանցավորություն ծնող պատճառների և դրանց վերացման ուղիների մասին: Օրինակ, Կամպանելլան պատճառահետևանքային կապ էր տեսնում մասնավոր սեփականության և մարդկանց հանցավորության միջև: Նա գտնում էր, որ սոցիալական պետության մեջ կրճատվելու են հանցագործությունները և իրավախախտումները: Դրան պետք է նպաստեր հասարակական և անհատական հետաքրքրությունների միաձուլումը, հասարակության սոցիալական արատների վերացումը, ապագա հասարակության մեջ դաստիարակության դերի բարձրացումը:

Հետաքրքրական է նաև այն միտքը, որ իրավախախտումների նվազեցման առումով մեծ նշանակություն ունեն աշխատանքը և աշխատանքային դաստիարակությունը: Կարևորվում էր նաև հասարակական օգտակար աշխատանքը՝ որպես իրավախախտողների վերադաստիարակության միջոց:

Լավագույն պետության մասին ուտոպիստ-սոցիալիստների երազանքը իր որոշակի մարմնավորումը ստացավ Կամպանելլայի «Արևի քաղաք» գրքում: Այդ երազանքը հարատևելու է, քանի դեռ Երկիր մոլորակի վրա ապրում է մարդը, քանի դեռ աշխարհում կա սոցիալական անհավասարություն, մարդու կողմից մարդու շահագործում, քանի դեռ իրավական օրենքները, այս կամ այն պետության օրենսդրությունը ծառայում են իշխանությունների շահերին, քանի դեռ, ինչպես հանճարեղ Դոստոևսկին էր ասում, աշխարհում կա «երեխայի թափվող մի կաթիլ արտասուք»: Ուստի շատ հարցադրումներ, որոնք բարձրացրեց Թ. Կամպանելլան, իրավական պետության մասին նրա գաղափարները շարունակելու են հետաքրքրել մարդկանց, և յուրաքանչյուր նոր սերունդ գտնելու է այնտեղ իրեն հուզող շատ հարցերի պատասխանը և մտածելու է լավագույն պետության մասին:

**ВОПРОСЫ СОЗДАНИЯ И СТАНОВЛЕНИЯ ДЕМОКРАТИЧЕСКОГО ГОСУДАРСТВА В РАБОТЕ Т. КАМПАНЕЛЛЫ “ГОРОД СОЛНЦА”**

САРГСЯН М. Л.

**Резюме**

Учение Т. Кампанеллы – одного из ярчайших мыслителей XVI-XVII вв., представителей утопического социализма дает возможность ознакомиться с чрезвычайно интересной системой государственного правового устройства, которая частично может быть востребована и сегодня, в частности, его суждения о формах государства, причинах преступности и путях ее искоренения, о браке и семье, труде, гражданских правах, системе суда и судопроизводства, о наказании за преступления, нашедшие отражение в его работе “Город солнца”.